

յառաջ բերեւին ետքը կրօնն. “Օգարուսան անփին մարմնով փառօր դասող զկենդանիս եւ զմեռեալս”, :

12. Որոյ թագաւորութեանն ոչ զոյ վախճան:

Փէշտինալճեանի իրեն առաջնորդ բնարած օրինակը հոս ասանկ ունի. “Որոյ ստորք եւ ւսմանի թագաւորութեանն ոչ զոյ վախճան”, : Եւ ընթերցուածն ամենեւին հիմ չունի յոյն բնագրին մէջ. պարզապէս հայկական կը կարծեմ ասոր ծագումը, եւ նոյնն ուրիշ կերպով շինուած չէ՝ բայց եթէ ծանօթ արեւելեան Երեք-սրբեան երգէն. “Սուրբ Եստուած, սուրբ հօր, սուրբ անմահ”, որն որ Հայոց քով եղած է. “Սուրբ Եստուած, սուրբ եւ հօր, ստորք եւ ւսման”, : — Սոյն յաւելուածը երբեմն պատարագի մէջ “Օրհնեալ թագաւորութիւն Հօր եւ Արդւոյ եւ Հոգւոյն սրբոյ”, խօսքին ալ (որն որ Յունաց *Εὐλογημένη ἡ βασιλεία τοῦ Πατρὸς καὶ τοῦ Υἱοῦ καὶ τοῦ Πνεύματος ἁγίου*) կը բայ՝ պայտէս. “Օրհնեալ ստորք եւ ւսմանի թագաւորութիւնն Հօր եւ Արդւոյ եւ Հոգւոյն սրբոյ”, : Կերեւայ որ Լամբրոնացի կը կարդայ հոս չիւր փոխանակ “ոչ զոյ”, ի :

13. Հաւատամք եւ ի սուրբ Հոգին յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս:

Հոս յունականին նայելով՝ կը տեսնուի որ բաւական մէկ հատուած մը հայերէնին մէջ պակսած է, անանկ որ ամբողջ պիտոր ըլլար. “Հաւատամք եւ ի սուրբ Հոգին, ոչ օտար ի Հօրէ եւ յՈրդւոյ, այլ գոյակից Հօր եւ Որդւոյ, յանեղն եւ ի կատարեալն, ի բարեխօսն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս”, :

Վժուարաւ կրնանք այս յօդուածն ամբողջացրնել մինակ Հայ գրչագրաց օգնութեամբ, որոնք մեզի ուրիշ բան չեն ընծայեր բայց եթէ ան ձեւը՝ որն որ Պատարագամատուցին մէջ կը գործածուի. ձեւ մը՝ որն որ միշտ համառօտութեան կը դիմէ: Միայն Լամբրոնացին հանգանակի Մեկնութեան տառն կ'երեւայ որ, ի մէջ այլոց օրինակաց, կատարելագոյն օրինակ մ'ունեցած է՝ որուն մէջ աս յօդուածն ամբողջ էր. որովհետեւ աս Հոգւոյն սրբոյ եղած յօդուածը մեկնելու ատեն, յոյն բնագրին համաձայն, կ'ըսէ. “եւ նորին ինքեանն ոչ օտար (Հոգին) յեութենէ խիութեան Հօր եւ Արդւոյ”, : Եւ խօսքիս մէջ կը տեսնուի մէկ նախադասութեան հաւաքուած՝ նախընթաց պարբերութեան կրկին անդամը, որ կ'ըսէր. “ոչ օտար Հօր եւ Արդւոյ, այլ գոյակից Հօր եւ Արդւոյ”, ինչպէս “նոյն ինքն յեութենէ Հօր”, նոյն էր “համադրակից Հօր”, ին : “Բարեխօս, բառը դեռ հայ գրչագիրներէն երեւան չելաւ :

գէնի ժամանակէն՝ երկար տարիներով՝ շարք մը կաթօւղիկօսաց քով իբրեւ

“սէն շար” (ինչպէս կ'ըսէ հեղինակս) գլտ. նուած է իբր խորհրդատու : Ծ. Հրտ. :